

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳԻՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՆՊԱՏԱԿ. Հաստատվել գործողություններ նպատակին հասնելու համար և ապահովել դրանց կատարումը:

Սույն գործողությունների ծրագիրը մշակվել է փորձագիտական եզրակացության հիման վրա և Ակադեմիայի ռազմավարական ծրագրի (ինչպես նաև **Ակադեմիայի 2013-2018 թվականների ռազմավարական ծրագրից** բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագրի) անքակտելի մասն է, և այն անհրաժեշտ է դիտարկել ընդհանուր նպատակներն ու խնդիրները սահմանող ռազմավարական ծրագրի դրույթների ներքո: Գործողությունների ծրագիրը ամրագրում է խնդիրներ և առաջարկում հստակ միջոցառումներ/քայլեր՝ փորձագիտական եզրակացության մեջ առկա բոլոր խորհրդատվությունների խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Յուրաքանչյուր միջոցառման համար նշված են ժամկետները, իրականացման համար պատասխանատու կողմերը, ֆինանսավորման աղբյուրը և այլն:

Գործողությունների ծրագիրը մշակված է երկու տարվա համար (2015-2017):

ԶԱՓԱՆԻՇ 1	ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	1) Կատարելագործել առաքելության և նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման մեխանիզմները ու մշակել դրանց իրականացման հստակ ընթացակարգեր, հստակեցնել ռազմավարական ծրագրով նախատեսված սպասվելիք արդյունքները և դրանց գնահատման ցուցիչները: 2) Ընդլայնել Ակադեմիայի արտաքին շահակիցների շրջանակը և ապահովել առավել ակտիվ մասնակցություն կարիքների վերհանման, ռազմավարական նպատակների ու խնդիրների սահմանման, ինչպես նաև կառավարման գործընթացներում:
Ընթացիկ վիճակի նկարագիր	✓ Ռազմավարական ծրագրով սահմանված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու նպատակով մշակվել և Ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 10-ի N 106-Ա հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի 2013-2018 թվականների ռազմավարական ծրագրից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագիրը»: Նշված փաստաթղթով սահմանվել են միջոցառումները, ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման ցուցանիշները, կատարման պատասխանատուները և ժամկետները: Այն իրենից փաստացի ներկայացնում է կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի համախումբ:

	<p>Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնին հանձնարարվել և իրականացվում է՝</p> <p>1) պատասխանատու կատարողներին ապահովել իրականացվող միջոցառումների ժամկետների մասին իրազեկումը.</p> <p>2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման Ակադեմիայի ռեկտորին ներկայացնել իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ:</p> <p>✓ Մատուցվող ծառայությունները գնահատելու նպատակով ներքին և արտաքին շահառուների շրջանում իրականացվում են հարցումներ: Ակադեմիայում խիստ կարևորվում է կրթության որակի ապահովման գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում սովորողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը: Թեև Ակադեմիայի առաքելությունը, նպատակները և խնդիրները համահունչ են գործատուների կարիքներին, սակայն արտաքին շահակիցների կարիքների վերհանման համար նրանց մասնակցությունը դեռևս ցածր է:</p>
--	---

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
1. Մշակել ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման, մշտադիտարկման և բարելավման մեխանիզմներ:	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Գիտական աշխատանքների գծով</p>	2016 թվականի դեկտեմբեր	<p>Ռազմավարական ծրագրով ամրագրված գործառնությունների հստակեցում՝ չիրականացվող կամ մասնակի իրականացվող գործառնությունների վերանայում ընդհանուր ձևակերպումների հստակեցում:</p> <p>Ակադեմիայի կառուցվածքի վերանայում և համապատասխանեցում ռազմավարական ծրագրի դրույթներին: Առկա են մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս առավել արագ արձագանքելու տեղի ունեցած փոփոխություններին և բարելավմանը միտված շտկումներ</p>	<p>Կիրառվում են ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման, մշտադիտարկման և բարելավման մեխանիզմներ:</p> <p>Իրավիճակի շարժընթացի</p>	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	պրոռեկտոր		<p>կատարելու միջնաժամկետ, երկարաժամկետ ծրագրերում: Մոնիթորինգի արդյունքներով նախատեսվող գործողությունների կամ հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողության իրականացման դրույթի ներառում:</p> <p>Հստակեցվել է, թե ինչ չափանիշներով և ինչ սանդղակով պետք է «չափել» ռազմավարական ծրագրի այս կամ այն բաղադրիչի իրականացման արդյունավետությունը: Այդ չափանիշների համաձայն կազմվում են Ակադեմիայի և նրա յուրաքանչյուր ստորաբաժանման տարեկան հաշվետվությունները, որտեղ արտացոլվում է համապատասխանությունը ակնկալվող և փաստացի արդյունքների միջև:</p>	<p>գնահատման և մշտադիտարկման ցուցիչների համակարգ (գործիքների ցանկ):</p> <p>Պաշտոնների անձնագրեր:</p>	
<p>2. Կազմակերպել կլոր սեղան-քննարկումներ՝ ըստ Ակադեմիայի առաքելության, ռազմավարական ծրագրի նպատակների և Ակադեմիայում մատուցվող ծառայությունների՝ շրջանավարտների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին</p>	<p>Պարբերաբար իրականացվող գործընթաց</p>	<p>Սահմանված են նաև քննարկումների ձևաչափը, մասնակիցներին, ժամկետները, բացահայտված խնդիրների վերացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևաչափը և ժամկետները, ինչպես նաև խնդիրների վերացման վերաբերյալ տեղեկանքների ձևաչափը:</p> <p>Գործունեության ընդլայնման վերաբերյալ ներկայացված են առաջարկություններ:</p> <p>Կլոր սեղան-քննարկումներ առնվազն տարեկան մեկ անգամ:</p>	<p>Մատուցվող ծառայությունների պահանջարկի վերաբերյալ վերլուծություն: Մատուցվող ծառայությունների բավարարվածության աստիճանի գնահատում: Կլոր սեղան-քննարկումներ առնվազն տարեկան մեկ անգամ</p>	<p>Ակադեմիայի արտաբյուջետային միջոցներ</p>

ՉԱՓԱՆԻՇ 2	ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	<p>3) Անցնել պլանավորման եռաստիճան համակարգի՝ մշակելով նաև միջնաժամկետ ծրագրեր:</p> <p>4) Հստակեցնել կառավարման կոլեգիալ մարմինների դերը Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման հարցում՝ ընդլայնելով ուսանողության մասնակցությունն այդ մարմինների աշխատանքներում:</p>
Ընթացիկ վիճակի նկարագիր	<p>✓ Որպես երկարաժամկետ պլանավորում՝ Ակադեմիայում, իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, մշակվել և հաստատվել է հնգամյա ռազմավարական ծրագիրը: Միջնաժամկետ պլանավորում, որպես այդպիսին, Ակադեմիայում չի իրագործվում, սակայն ռազմավարական ծրագրով սահմանված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու նպատակով մշակվել և Ակադեմիայի ռեկտորի 2014 թվականի ապրիլի 10-ի N 106-Ա հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի 2013-2018 թվականների ռազմավարական ծրագրից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագիրը»:</p> <p>✓ Ակադեմիայի տարեկան գործունեության կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը կազմվելուց հետո դրա էլեկտրոնային տարբերակը էլեկտրոնային փոստով ուղարկվում է Ակադեմիայի բոլոր ստորաբաժանումներ և գիտական խորհրդի բոլոր անդամներին՝ նախնական ծանոթացման և հնարավոր առաջարկությունների ձևավորման համար, որից հետո այն քննարկվում է գիտական խորհրդի նիստում, ապա՝ հավանության արժանանալուց հետո, հաշվետվությունը ներկայացվում է Խորհրդի անդամներին: Խորհրդի նիստում հաստատված հաշվետվությունը ամբողջությամբ զետեղվում է Ակադեմիայի կայքում:</p> <p>Ակադեմիայի կառավարման համակարգը, գործող կանոնադրությունն ու կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս ընդգրկվելու Ակադեմիայի տարբեր մակարդակների կառավարման մարմինների կազմերում և անմիջականորեն մասնակցելու թե՛ Ակադեմիայի կառավարման գործընթացին, և թե՛ իրենց առնչվող հարցերի քննարկմանն ու որոշումների կայացմանը: Տարբեր խորհուրդներում ընդգրկվում են ինչպես ուսանողներ, այնպես էլ դասախոսներ՝ ըստ այդ խորհուրդների հաստատված կանոնադրությունների պահանջների: Ակադեմիայի գիտական խորհրդի կազմում ընդգրկված են ուսանողական խորհրդի և յուրաքանչյուր մասնագիտության ներկայացուցիչներ: Բացի այդ, կառավարման գործընթացներին ուսանողների մասնակցության անուղղակի ձևերից են ուսանողական հարցումները, վերլուծական զեկույցները, ղեկավարության հետ պարբերաբար հանդիպումները, որոնց արդյունքները հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ:</p>

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԲՅՈՒՆՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
<p>3. Կատարելագործել Ակադեմիայի կառավարման համակարգը և բարձրացնել դրա արդյունավետությունն ու որակը՝ հիմք ընդունելով Ակադեմիայի ռազմավարական ծրագիրը: Ներդնել միջնաժամկետ/ կարճաժամկետ պլանավորման համակարգ:</p>	<p>Ռեկտոր պրոռեկտորներ</p>	<p>2016 թվականի դեկտեմբեր</p>	<p>Ակադեմիայում առկա պաշտոնների գործառնական պարտականությունների վերլուծություն, կանոնակարգեր, բարեփոխումների միջնաժամկետ ծրագիր: Վերանայվել են յուրաքանչյուր ստորաբաժանման գործառույթները՝ հստակեցնելով յուրաքանչյուր աշխատակցի իրավունքներն ու պարտականությունները: Ակադեմիայի կառուցվածքի վերանայում և համապատասխանեցում Ռազմավարական ծրագրի դրույթներին: Մշակվել, վերանայվել են վարչական, ուսումնասօժանդակ, պրոֆեսորադասախոսական կազմերի պաշտոնների անձնագրերը (աշխատանքի նկարագրերը): Իրականացվել է կառավարման կառուցվածքային համակարգի բարեփոխումներ՝ Ակադեմիայի դինամիկ զարգացման նպատակով: Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ինքնավերլուծական</p>	<p>Վարչական կառույցների (մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական) գործունեության արդյունավետության միջնաժամկետ գնահատման հստակ մեխանիզմներ: Աշխատողների պաշտոնների անձնագրեր (թվով՝ 55-65): Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությանը կարգավորող ընթացակարգերի, կանոնակար-</p>	<p>ԵՄ Տեմպուսի GOVERN («Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշա-</p>

			<p>աշխատանք: Ակադեմիայի և նրա առանձին ստորաբաժանումների գործունեության հաշվետվություն (հաշվետվության նոր ձևաթուղթ):</p>	<p>գերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն: Ինքնավարությանը օժտված ստորաբաժանումների և իրենց գործառույթներին հստակ տիրապետող վարչական կազմ: Ակադեմիայի կազմակերպչական կառուցվածքում վերանայված ստորաբաժանումների քանակ: Կառուցվածքային ստորաբաժանումների համակարգված համագործակցություն միջնաժամկետ ծրագրերի իրականացման համատեքստում:</p>	<p>կում՝ արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով») եռամյա ծրագրի շրջանակներում</p>
<p>4.Ապահովել Ակադեմիայի Խորհրդի, գիտական Խորհրդի և կառավարման մյուս մարմինների ներդաշնակ գործունեությունը, ձևավորել որոշումների ընդունման և կատարման հիերարխիկ հստակ</p>	<p>Ռեկտոր Պրոռեկտորներ Գիտական քարտուղար</p>	<p>Մշտապես իրականացվող գործընթաց</p>	<p>Ակադեմիայի կառավարման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածություն: Ակադեմիայի կառավարման գործընթացում դասախոսական կազմի ներգրավվածություն:</p>	<p>Կառավարման իրավական փաստաթղթային բազայի ամբողջականացում (գիտական</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>համակարգ՝ կիրառելով ժողովրդավարական սկզբունքներ:</p>			<p>Ուսումնառողների ներգրավվածությունը կառավարման գործընթացներին: Վարչակառավարչական ապարատի թափանցիկ գործունեություն: Կրթության որակի ապահովման թափանցիկ գործունեություն:</p>	<p>Խորհրդի և ռեկտորատի աշխատակարգեր, ստորաբաժանումների կանոնակարգեր, աշխատողների պաշտոնների անձնագրեր): Ակադեմիայի աշխատակիցներին կառավարչական որոշումների հասանելիության ապահովում: Խորհրդի հետ արդյունավետ հարաբերությունների և շարունակական հաղորդակցության ապահովում: Կառավարման գործունեության թափանցիկության ապահովում: Ակադեմիայի գործունեության տարեկան հաշվետվությունների հրապարակում:</p>	
---	--	--	--	---	--

				Կառուցվածքային ստորաբաժանումների ներքին համագործակցություն:	
5. Չարգացնել ուսանողական ինքնավարությունը Ակադեմիայում՝ ընդլայնելով և խորացնելով սովորողների մասնակցությունը Ակադեմիայի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում: Նպաստել ուսանողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:	Ակադեմիայի կառավարման մարմինները Ակադեմիայի ուսանողական խորհուրդ	Մշտապես իրականացվող գործընթաց	Ընդլայնվել է ուսանողների մասնակցությունը Ակադեմիայի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում, բարձրացել է կառավարման տարբեր կոլեգիալ մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը: Ուսանողների ինքնավարությունը և մասնակցությունը Ակադեմիայի կառավարմանը բարձրացրել է ուսանողի ինքնագիտակցությունը, արժանապատվության և քաղաքացիական պատասխանատվության զգացումը:	Ուսանողների մասնակցությունը կառավարման մարմինների նիստերին, նրանց կողմից առաջարկված նախագծերի թվաքանակ:	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
6. Ապահովել սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, Ակադեմիայում հակակոռուպցիոն միջոցառումներում (սոցիոլոգիական հարցումներ, մշտադիտարկումներ և այլն) ուսանողական կառույցի դերի բարձրացմանը: Ձգտել սովորողների և դասախոսների	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին	Մշտապես իրականացվող գործընթաց	Ակադեմիայի անձնակազմի և ուսանողության միջև փոխադարձ հարգանքի և վստահության զարգացում: Կառուցողական համագործակցության զարգացման ապահովում ուսանողական ինքնավարության մարմնի և Ակադեմիայի վարչակառավարչական կազմի միջև: Ակադեմիայում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման և կոռուպցիոն դրսևորումների բացահայտման հարցերի ընդգրկում (կառավարման մարմինների օրակարգում պարտադիր	Անձնակազմի և ուսանողների քանակը, որոնք ներգրավված են հասարակական և մասնագիտական խորհուրդներում, ինքնակառավարվող մարմիններում: Անձնակազմի և ուսանողների բավարարվա-	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

<p>համագործակցության զարգացմանն ինչպես ուսումնական, այնպես էլ այլ ոլորտներում:</p>			<p>կերպով):</p>	<p>ծուխան աստիճանը Ակադեմիայի ղեկավարման գործընթացից:</p> <p>Զարգացման ծրագրում Ակադեմիայի անձնակազմի և սովորողների մասնակցության աճը:</p>	
<p>7. Ստեղծել և արմատավորել Ակադեմիայի անձնակազմի և սովորողների կողմից ընդունվող արժեքների և վարքագծի կանոնների համակարգ, բարելավել ընկերային և մշակութային մթնոլորտը, ձևավորել միասնական էթիկական չափանիշներ Ակադեմիայի ներսում (էթիկայի կոդեքս):</p>	<p>Ռեկտոր Պրոռեկտորներ Իրավա- խորհրդատու Ուսումնամեթո- դական վարչություն</p>	<p>2016 թվականի սեպտեմ- բեր</p>	<p>Անձնակազմի և սովորողների վարքագծի միասնական կանոնները ամրագրված են: Ակադեմիան ապահովում է այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, որը նպաստում է սովորողների վարքագծի ընդհանուր էթիկական սկզբունքների և չափանիշների, ազգային արժեքների պահպանմանն ու զարգացմանը, օգնում գիտակցելու էթիկական վարքագծի կարևորությունը իրենց հետագա մասնագիտական գործունեության և առաջխաղացման հարցերում, ինչպես նաև հանրային կյանքի այլ ոլորտներում: Ակադեմիան ապահովում է լավագույն ավանդույթների և արժեքների պահպանումը, ստեղծում մթնոլորտ, որտեղ ավանդույթներն ու նոր գաղափարները փոխլրացնում են միմյանց՝ նպաստելով Ակադեմիայի կայունությանը:</p>	<p>Միասնական էթիկական չափանիշներ (էթիկական կոդեքս):</p> <p>Անձնակազմի ձեռնարկ:</p> <p>Ուսանողի ձեռնարկ:</p>	<p>ԵՄ Տեմպուսի GOVERN («Աջակցու- թյուն բու- հական ինքնավա- րությանը և հաշվետվո- ղականու- թյանը. Բարձրա- գույն կրթության կառավար- ման ժամանա- կակից և Բոլոնիայի գործընթա- ցի սկզբունք- ներին</p>

					համահունչ համակարգի մշակում՝ արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով») եռամյա ծրագրի շրջանակներում
--	--	--	--	--	--

ՉԱՓԱՆԻՇ 3	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդակցություն	<p>5) Հստակեցնել ՄԿԾ-ներով սահմանված վերջնարդյունքներն ըստ մասնագիտությունների, դրանց համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին:</p> <p>6) Մշակել մասնագիտության կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ, կիրառել հստակ չափելի ցուցանիշներ որակի համալիր գնահատման համար:</p> <p>7) Բազմազանեցնել դասավանդման մեթոդները, դրանք ուղղել սահմանված կոմպետենցիաների ձեռքբերմանը՝ համապատասխան ռեսուրսների զարգացման միջոցով:</p> <p>8) Վերանայել ուսանողների գնահատման համակարգը, հստակեցնել գնահատման չափանիշները:</p> <p>9) Գործուն միջոցառումներ ձեռնարկել դասախոսների և ուսանողների միջազգային շարժունակությունը մեծացնելու համար:</p>
Ընթացիկ վիճակի նկարագիր	<p>✓ Հավաքագրվել և վերլուծվել է մեծ ծավալի տեղեկատվություն՝ ստացված ուսանողների, շրջանավարտների, աշխատակիցների և այլ շահակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքում: Նախատեսվում է, որ այդ հարցումների վերլուծությունը թույլ կտա գնահատելու Ակադեմիայի կատարած աշխատանքը՝ բարելավելով կրթական և այլ գործընթացների իրականացման արդյունավետությունը:</p> <p>Ակադեմիան կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվություն է տարածում կայքի, գովազդային նյութերի, «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի, «Հանրային կառավարում» գիտական հանդեսի, սեմինարների միջոցով: Չնայած դրան, Ակադեմիայում ներկայումս բացակայում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական</p>

տեղեկատվության հրապարակումները գնահատող հստակ մեխանիզմներ: Այս առումով, Ակադեմիան կարևոր քայլ է համարում կրթական նոր ծրագրերի ստեղծման և գործող ծրագրերի վերանայման նոր մեխանիզմների և ընթացակարգերի ներմուծմանը նվիրված մեթոդական ցուցումների հրատարակումը:

Ակադեմիայի 2013 թվականի նոյեմբերի 29-ի գիտական խորհրդի նիստում տպագրության է երաշխավորվել **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի որակի ապահովման ձեռնարկը:**

Ձեռնարկը բաղկացած է նաև որակի ներքին ապահովման 3 ընթացակարգերից և դրան կից ներկայացվող ձևաթղթերից.

- նոր կրթական ծրագրի մշակման արտոնման ընթացակարգ,
- կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) ընթացակարգեր,
- կրթական ծրագրերի պարբերական վերանայման և վերահաստատման ընթացակարգեր:

Որակի ապահովման ընթացակարգերը նպատակ ունեն պլանավորելու և հստակ գործողությունների վերածելու որակի ապահովման քաղաքականությունից բխող առաջադրանքները և գործընթացները, ուղղորդելու դրանց իրականացման ընթացքը: Սակայն, հարկ է նշել, որ նշված ընթացակարգերը դեռևս նախագծերի տեսքով են:

✓ Ուսուցումը կազմակերպվում է դասախոսությունների, սեմինարների, բանավեճերի, ընդունված իրավական ակտերի և դրանց յուրահատկությունների շուրջ հարցերի քննարկման, կոնկրետ գործերին ծանոթանալու, ինքնակրթությունը խրախուսող դիդակտիկ նյութերի, տեսաժապավենների օգտագործմամբ և կրթական արդի այլ եղանակներով ու մեթոդներով: Այս առումով հարկ է շեշտադրել նաև այն հանգամանքը, որ Ակադեմիայի կառավարման, ղեկավարման մարմինների և պրոֆեսորադասախոսական կազմի կառուցվածքը ևս նախատեսված է այնպես, որ հնարավոր լինի ապահովել կրթական գործընթացում շահառու պետական մարմինների մասնակցությունը: Ամփոփիչ քննության հարցաշարը կազմելիս, բացի տեսական հարցերից, 2014 թվականից սկսած ներառվեցին նաև կիրառական բնույթի հարցեր, ինչը հնարավորության ընձեռեց բացահայտելու ոչ միայն սովորողի գիտելիքները, այլև կարողությունները և հմտությունները: Որպես արդյունավետ գործիք՝ ուսուցման մեջ սկսեցին կիրառվել քեյսեր:

✓ Մշակվել և հաստատվել են «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում քննությունների և ստուգարքների արդյունքների բողոքարկման կարգը» և ուսանողների գնահատման նոր կարգը: Ուսանողների բոլոր քննությունները, ստուգարքները և ամփոփիչ ատեստավորուման ընթացքը տեսաձայնագրվում են:

✓ Ակադեմիայում իրականացվում են ուսանողների ակադեմիական շարժունությանը նպատակաուղղված մի շարք ծրագրեր, որոնք դեռևս սահմանափակվում են միայն ուսանողների մեկամսյա պրակտիկայի կազմակերպմամբ արտերկրյա գործընկեր հաստատություններում: Գործող համաձայնագրերի շրջանակներում իրականացվում են նպատակաուղղված որոշ ծրագրեր, որոնց շրջանակներում Ակադեմիայում դասախոսում են են արտերկրյա գործընկեր հաստատությունների դասախոսներ տարբեր թեմաներով:

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԲՅՈՒՆՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
<p>8. Մշակել ուսուցման չափելի ելքային վերջնարդյունքների (գիտելիք-կարողություն-հմտություն) վրա հիմնված, նոր կրթական բնութագրիչներ՝ տարբերակված ըստ մասնագիտական ուղղությունների և որակավորման աստիճանների:</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Թողարկող ամբիոններ</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնական տարվանից</p>	<p>Կրթական ծրագրերը վերակառուցվել են ըստ վերջնարդյունքների:</p> <p>Վերանայված են կրթական ծրագրերը՝ շնորհվող որակավորումներին ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանությամբ:</p> <p>Ծրագրերի որակի գնահատման ժամանակ հաշվի են առնվել արտաքին գնահատողների կարծիքները:</p> <p>Համաձայնեցված կրթական ծրագրեր՝ ուղղված կոմպետենցիաների ձևավորմանը:</p>	<p>Աշխատանքի շուկայի պահանջներին համահունչ՝ հաստատված ՄԿԾ վերջնարդյունքներ,</p> <p>վերանայված ուսումնական պլաններ և ըստ վերջնարդյունքների առարկայական ծրագրեր:</p> <p>Դասընթացների արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցաթերթիկներ,</p> <p>արդյունքների վերլուծություն, քննարկում կառավարման</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

<p>9. Համադրել և ներդաշնակեցնել մագիստրոսի, հետազոտողի կրթական ծրագրերի բովանդակությունը, որակավորման բնութագիչները և ավարտական պահանջները, փոխհամաձայնեցնել ելքի և մուտքի պահանջները իրար հաջորդող ծրագրերի միջև:</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ամբիոններ</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնական տարվանից</p>	<p>Կրթական ծրագրերն ունեն հստակ սահմանված և հրապարակված նպատակ, ակնկալվող կրթական վերջնարդյունքներ և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ընտրված մեթոդներ, որոնք նպաստում են սովորողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը:</p>	<p>մարմիններում: Թյունիգյան մեթոդաբանության մասնագիտական և ընդհանուր կոմպետենցիաների ձևավորված համակարգ: Փուլային անցում կրթական ծրագրերի ձևավորմանը՝ կոմպետենցիաների զարգացմանն ուղղված, եվրոպական կառուցվածքի: Կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների դրական արձագանք:</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
<p>10. Կատարելագործել սովորողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համակարգերը և գործընթացները՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքները և ուսուցման կազմակերպական արդյունավետությունը: Կատարելագործել ուսանողների գիտելիքի գնահատման մեթոդաբանության հայեցակարգը՝</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Մասնագիտական կրթության</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնական տարվանից</p>	<p>Վերանայված է սովորողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համակարգը: Սովորողները գնահատվում են հրապարակված և հետևողականորեն կիրառվող չափանիշների, կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով: Ներդրված գնահատման համակարգը համադրելի է միջազգայնորեն ընդունված գնահատման</p>	<p>Սովորողների թափանցիկ գնահատման մեխանիզմներ: Պաշտոնական փաստաթղթեր և արձանագրություններ, որոնք հավաստում են գնահատման արդյունքների</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

ներառյալ գնահատականների վերանայման և բողոքարկման մեխանիզմները:	որակի ապահովման բաժին		չափանիշներին: Գնահատման ընթացակարգում ակադեմիական ազնվության ապահովում:	հրապարակայնությունը, դրանց վերլուծությունը, քննարկումը և կիրառումը՝ ուսումնական գործընթացի բարելավման նպատակով: Ուսուցման գնահատման արդյունքների պարբերաբար հրապարակում: Սովորողների ինչպես ընթացիկ, այնպես էլ եզրափակիչ գնահատման որակի ապահովման մեխանիզմներ: Գնահատման համակարգի կիրառման ներքին վերահսկողության հետևողական ընթացակարգեր:	
11. Նպաստել և խրախուսել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր	2017 թվականից սկսած	Դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների մշակում՝ հաշվի առնելով արտաքին և ներքին	Դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմներ:	ՀՀ պետական բյուջե, օրենքով

<p>ցուցաբերվող նախաձեռնությունները: Ակադեմիայի դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության բարելավման նպատակով ձևավորել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման մեխանիզմներ:</p>	<p>Գիտական աշխատանքների գծով պրառեկտոր</p>		<p>շահակիցների կարծիքը: Խթանվել է Ակադեմիայի կադրային ներուժի դասավանդման արդյունավետության բարձրացումը, նորարարական ակտիվությունը և ստեղծագործական նախաձեռնությունը: Ստեղծել են մասնագիտական աճի հնարավորություններ ոչ բավարար հմտություններով դասախոսների համար: Ներդրվել են դասավանդման որակի և դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմներ:</p>	<p>Դասախոսական կազմի առավել հավաստի արդյունքներ (ինքնագնահատում, գնահատում անմիջական ղեկավարի, ուսանողների և գործընկերների կողմից): Ուսանողների շրջանում կանոնավոր կերպով անցկացվող հարցումների արդյունքները: Ուսուցման կառավարման MOODLE հարթակ: Դասավանդման որոշակի քանակի էլեկտրոնային ուսուցման Ուսումնամեթոդական նյութերով ապահովվածություն: Վերապատրաստված դասախոսների</p>	<p>չարգելված այլ միջոցներ</p>
---	--	--	---	--	-------------------------------

				<p>թվաքանակը: Գիտական աստիճան ունեցող հիմնական դասախոսական կազմը՝ ընդհանուր կազմի առնվազն 50 տոկոսը: Կադրերի հոսունության տոկոսը: Աշխատավարձի բարձրացման միջին տարեկան տեմպը:</p>	
<p>12. Նպաստել արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ համագործակցությանը՝ խթանելու շարժունության ձևերի բազմազանությունը:</p>	<p>Արտաքին կա- պերի գծով պրոռեկտոր</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնա- կան տարվա- նից</p>	<p>Արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ ակադեմիական շարժունության ծրագրերի առկայություն: Այլ ուսումնական հաստատությունների հետ փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր: Ակադեմիան ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:</p>	<p>Միջազգային շարժունակու- թյան բարելավման եռամյա ծրագիր: Կնքված պայմանագրերի քանակ: Ակադեմիական շարժունության ծրագրերում ընդգրկված ուսանողների, դասախոսների և աշխատողների քանակ: Ուսումնական հաստատություն ների ցանկ,</p>	<p>Միջազգա- յին դոնոր կազմակեր պություն- ներ Արտաբյուջ ետային միջոցներ</p>

				<p>որոնց հետ Ակադեմիան ունի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:</p> <p>Արտերկրում Ակադեմիայի սովորողների կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպում:</p>	
--	--	--	--	--	--

ՉԱՓԱՆԻՇ 4	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
<p>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդարկություն</p>	<p>10) Կատարելագործել Ակադեմիայում գործող՝ ուսանողների, հատկապես հեռակա կրթություն ստացող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման ցուցիչները և որակի ապահովման մեխանիզմները, իսկ ստացված արդյունքները կիրառել Ակադեմիայի զարգացման կամ ռազմավարական ծրագրերում:</p> <p>11) Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները:</p> <p>12) մշակել ու ներդնել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների հստակ ընթացակարգեր: Մասնավորապես, նպատակահարմար է մշակել առարկայական ծրագրերով՝ լրացուցիչ պարապմունքների համար նախատեսված դասաժամերի կատարման վերահսկողության մեխանիզմներ:</p> <p>13) Ընդլայնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:</p> <p>14) Սահմանել վարչական անձնակազմին ուսանողների դիմելու կանոնակարգ ու ժամանակացույց:</p> <p>15) Ուսանողների կարիերային աջակցելու նպատակով նրանց նախապատրաստել համապատասխան աշխատատեղերի համար նախատեսված ընթացակարգերին, հատկապես՝ քաղաքացիական ծառայության համակարգի մրցույթներին:</p> <p>16) Ձևավորել ՈՒԳԸ, ՈՒԳԽ, ավելի շատ ուշադրություն դարձնել դասախոս-ուսանող գիտական համատեղ աշխատանքներ կատարելուն, ուսանողների և դասախոսների գիտահետազոտական աշխատանքներում</p>

	<p>ներգրավվածության աստիճանի բարձրացմանը:</p> <p>17) Ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսանողների իրավունքների պաշտպանության խնդիրներին, այդ գործառույթները տարածելով Ակադեմիայի կառուցվածքային որոշ միավորների վրա, ստեղծել իրավաբանական ծառայություն՝ խորհրդատվություն և այլ ծառայություններ տրամադրելու նպատակով:</p>
<p>Ընթացիկ վիճակի նկարագիր</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Ուսանողների կրթական կարիքները վերհանելու նպատակով անցկացվում են հարցումներ, որոնց հարցաշարերը պարբերաբար վերանայվում են: Ուսանողների կարիքների վերահանման գործում որոշակի նշանակություն ունեն ուսանողների հետ հանդիպումները, ինչպես նաև նրանց դիմում-բողոքները և առաջարկությունները: Դրանցում արժարժված խնդիրների հիման վրա վեր են հանվում ուսանողների կարիքները, որոնց բավարարման նպատակով քննարկումներ են իրականացվում Ակադեմիայի կառավարման մարմիններում: ✓ Ուսանողների ակադեմիական պահանջների բավարարման նպատակով կազմակերպվում են դասախոսների հետ արտալսարանային հանդիպում-խորհրդատվություններ, լրացուցիչ պարապմունքներ: Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում խորհրդատվական ծառայությունների (մենթորային հարաբերությունների) կազմակերպման կանոնակարգը»: Այն սահմանում է խորհրդատվական ծառայությունների (մենթորային հարաբերությունների) կազմակերպման գործընթացի ընդհանուր հիմունքները, ուսումնական խորհրդատուի (մենթորի) և մենթիի պարտականությունները և նպատակ ունի կանոնակարգելու մենթորության հետ կապված աշխատանքները: Ունենք կնքված համաձայնագրեր մենթորների հետ: ✓ Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտության ընտրության հարցում Ակադեմիայի դիմորդներին տրամադրվում է խորհրդատվություն՝ պրոֆեսիոգրամաների և փսիխոգրամաների օգնությամբ: ✓ Համագործակցության պայմանագրեր են կնքվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ: ✓ Ակադեմիայի ուսանողներն իրենց հուզող հարցերով կարող են դիմել ռեկտորին և ուսումնամեթոդական վարչություն: Սահմանված են ռեկտորի՝ սովորողների ընդունելության ժամեր: Բարձրացված խնդիրներին լուծում են տրվում համապատասխան ամբիոններում, իսկ անհրաժեշտության դեպքում հարցը քննարկվում է ռեկտորատի նիստում: Վարչական կազմի կողմից ուսանողներին տրամադրված օժանդակությունն ու ուղղորդումը Ակադեմիայում գնահատվում է հարցումների միջոցով: ✓ Ակադեմիան տարբեր մեխանիզմներով փորձում է նպաստել իր ուսանողների կարիերային՝ ապահովելով սովորողների և նրանց հնարավոր գործատուների կապը: Ակադեմիայի ուսանողներն փորձառություն են անցնում հնարավոր գործատու կազմակերպություններում, որոնք մեծամասամբ պետական կառավարման մարմիններ են: ✓ Ակադեմիայում ձևավորված է բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ, որ ուսանողների իրավունքների պաշտպանության գործընթացներն արդյունավետորեն իրականացվում են առանց խոչընդոտների: ✓ Ակադեմիան աշխատանքներ է իրականացնում դասախոս-ուսանող գիտական համատեղ աշխատանքներ կատարելու, ուսանողների և դասախոսների գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐ-ՄԱՆ ԺԱՄ-ԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ / ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐՔՈՒՐՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
<p>13. Կատարելագործել Ակադեմիայի առկա և հեռակա ուսանողների, կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գործընթացը:</p> <p>Ստեղծել առցանց (e-learning) դասընթացներ, մասնավորապես՝ հեռակա ուսուցման ուսանողների համար:</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնական տարվանից</p>	<p>Սահմանված են Ակադեմիայի կողմից մատուցվող մագիստրոսական, ասպիրանտական և լրացուցիչ կրթության ծառայությունների որակը բնութագրող ցուցիչները:</p> <p>Ուսուցումը կազմակերպվում է սովորող - դասախոս ներդաշնակ համագործակցության մթնոլորտում:</p> <p>Գործող մենթորության մեխանիզմ: Ընդլայնվել են առցանց ուսուցման կազմակերպման ձևերը:</p> <p>Առցանց (e-learning) ուսուցում կազմակերպելու նախապատրաստական աշխատանքների իրականացմամբ համապատասխան առաջարկություններ, այդ թվում՝ նյութատեխնիկական սարքավորումներ ձեռք բերելու առաջարկություններ են ներկայացված:</p>	<p>Առկա են մատուցվող մագիստրոսական, ասպիրանտական և լրացուցիչ կրթության ծառայությունների որակը բնութագրող ցուցիչներ և գնահատման մեխանիզմներ: Մենթորության դպրոցի կայացում: Հեռակա ուսուցման համակարգի դասընթացների ապահովվածություն էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

				նյութերով: Ուսուցման կառավարման MOODLE հարթակ: Ներդրված առցանց դասընթացներ, դասախոսություն ների տեսքեր, էլեկտրոնային և աուդիո գրադարան, վիդեո նյութեր:	
14. Ձևավորել ՈՒԳԸ կամ ՈՒԳԽ:	Ռեկտոր Պրոռեկտորներ Ուսումնամեթո- դական վարչություն Ոսանողական խորհուրդ	2016 թվականի հոկտեմ- բեր	Միջբուհական և ներբուհական ուսանողական գիտաժողովների կազմակերպում: Ակադեմիայի մագիստրանտների, ասպիրանտների մասնակցությունը հանրապետական, տարածաշրջանային, ԱՊՀ այլ մրցույթներին և ծրագրերին:	ՈՒԳԸ կամ ՈՒԳԽ աշխատակարգ: ՈՒԳԸ կամ ՈՒԳԽ աշխատանքային միջնաժամկետ ծրագիր: Գիտահետազո- տական աշխատանքնե- րում ընդգրկված սովորողների թվաքանակի աճ: Ուսանողական գիտական հրապարակում- ների աճ: Սովորողների հրապարակում- ների քանակա- կան աճ:	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

ՉԱՓԱՆԻՇ 5	ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ
<p>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն</p>	<p>18) Լրամշակել պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական անձնակազմի ընտրության, կատարելագործման և մասնագիտական առաջընթացի ապահովմանն ուղղված քաղաքականությունը, մշակել ընթացակարգերի գնահատման մեխանիզմներ:</p> <p>19) Հրավիրված և նոր ընտրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար անցկացնել մասնագիտական մանկավարժության վերապատրաստման դասընթացներ:</p> <p>20) Մշակել դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ յուրաքանչյուր դասավանդվող առարկայի և կատարելագործել դասախոսների ընտրության մրցութային համակարգը:</p>
<p>Ընթացիկ վիճակի նկարագիր</p>	<p>✓ Ակադեմիայում առկա են աշխատանքային պայմանագրերի, անձնական գործերի, ամբիոնի վարիչների ընտրությունը կանոնակարգող փաստաթղթեր: Գործող ընթացակարգերը հնարավորություն են տալիս Ակադեմիայում իրականացվող կրթական ծրագրերում ներգրավել նաև բարձրատիճան պաշտոնատար անձանց, որոնք հրավիրվում են դասավանդելու համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով: Այժմ կատարվում է առկա ընթացակարգերի բարելավում:</p> <p>Ակադեմիայում իրականացվում են դասախոսական կազմի գնահատման ընթացակարգեր՝ հարցումների, դասախոսումների միջոցով: Ակադեմիայում ներդրվել և կիրառվում է ընտրովի դասընթացների, ինչպես նաև դասախոսների ընտրության համակարգ:</p> <p>✓ Գործում են որոշակի խրախուսիչ մեխանիզմներ՝ օտար լեզվի դասընթացների, գիտաժողովների կազմակերպում, որոշակի շարժունության ապահովում, որոնք նպատակաուղղված են բարձրացնելու պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիան և մասնագիտական որակավորումը: Իրականացվել են դասավանդողների կատարելագործմանն ուղղված որոշ գործընթացներ: Մի շարք աշխատակիցների համար կազմակերպվել են անգլերենի, ֆրանսերենի դասընթացներ, որին մասնակցել է հիմնականում ուսումնասովանողական կազմը: Դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը գնահատվում են հարցման միջոցով:</p> <p>✓ Ակադեմիայում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները սահմանված են մասնակի, աշխատանքներն ընթացքի մեջ են:</p>

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ / ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԲՅՈՒՆՆԵՐԸ
Ի՞նչ պետք է արվի:	Ո՞վ է իրականաց-			Որո՞նք են մեր ցուցանիշները:	

	նում:				
<p>15. Բարելավել և համալրել պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի բարեփոխումներին և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ:</p>	<p>Ռեկտոր Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p>	<p>սկսած 2017/2018 ուսումնական տարվանից</p>	<p>Իրականացվել է պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում՝ կրթական ծրագրերի որակի ապահովման պահանջների համապատասխանության տեսակետից:</p> <p>Ակադեմիայի կադրային համակազմի զարգացում և բարելավում:</p> <p>Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգի առկայություն:</p>	<p>Դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական չափանիշներ: Պաշտոնների անձնագրեր: Անձնակազմի համալրման ընթացակարգ: Ակադեմիայի ղեկավար, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման, խրախուսման կարգի կիրառում: Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգ /բազմակողմ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

<p>16. Ստեղծել դասախոսների վերապատրաստման և կատարելագործման մեխանիզմներ՝ վերապատրաստման թեմաների և մեթոդների արդիականացման և անհրաժեշտության բարձրացմամբ:</p> <p>Ապահովել վարչական կազմի կառավարչական հմտությունների կատարելագործումը վերապատրաստումների միջոցով:</p>	<p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնական տարվանից</p>	<p>Ակադեմիայում աշխատողների մասնագիտական որակի բարձրացման (շարունակական մասնագիտական զարգացման), վերապատրաստման և գնահատման կարգի» մշակում՝ պայմանավորված ՀՀ-ում միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրման միջոցով կրթական կադրերի մասնագիտական ունակությունների և գիտելիքների բարձրացման և հասարակությանը տրամադրվող կրթական ծառայությունների որակի անընդհատ բարելավման անհրաժեշտությամբ:</p> <p>Դասախոսական կազմին տրվել է դասավանդման հմտությունների զարգացման և կատարելագործման հնարավորություն:</p> <p>Մշակվել և իրականացվել են դասախոսների վերապատրաստման և կատարելագործման ծրագրեր:</p> <p>Վարչական կազմի կառավարչական հմտությունների կատարելագործում վերապատրաստումների միջոցով:</p> <p>Առցանց կրթության աջակցման էլեկտրոնային կրթական ռեսուրսների մշակման և կիրառման իրականացման նպատակով դասախոսական համակազմի որակավորման բարձրացում:</p> <p>Դասախոսների վերապատրաստման և կատարելագործման մեխանիզմներ:</p>	<p>գնահատման արդյունքներ/:</p> <p>Դասախոսների վերապատրաստման և կատարելագործման կարգ, ծրագրեր:</p> <p>Վերապատրաստված դասախոսական համակազմ:</p> <p>Վերապատրաստված վարչական կազմ:</p> <p>Հիմնական և լրացուցիչ, հեռավար նոր կրթական ծրագրերի քանակը, դրանց մշակմանն ու իրականացմանը մասնակցող դասախոսների թվաքանակը:</p> <p>Առցանց ուսուցում իրականացնող դասախոսական համակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակը և</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
---	--	---	---	--	--

			<p>Դասախոսական կազմի վերապատրաստում էլեկտրոնային ուսուցման դասընթացների (էլեկտրոնային դասագրքեր և դասախոսությունների տեքստեր, ուսումնական քեյս-փաթեթներ, առարկայական ծրագրեր, թեստավորման փաթեթներ և այլն) մշակման և իրականացման համար: Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում հիմնական դասախոսների կողմից:</p>	թվաքանակը:	
--	--	--	---	------------	--

ՉԱՓԱՆԻՇ 6	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
<p>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդավորություն</p>	<p>21) Մշակել հետազոտությունների իրականացումն ապահովող հստակ քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն գնահատելու գիտահետազոտական գործունեության որակը:</p> <p>22) Մշակել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման, գիտական աշխատանքներում ուսանողների ներգրավման և հետազոտության արդյունքներն ուսումնական գործընթացում ներդնելու գործուն մեխանիզմներ, մշակել դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող մեխանիզմներ:</p> <p>23) Առավել մեծ ուշադրություն դարձնել հետազոտության ոլորտում Ակադեմիայի հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի մշակման, դրանց հայտավորման և իրականացման վրա:</p> <p>24) Ուշադրություն դարձնել պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզուների տիրապետման և արտասահմանյան առաջնակարգ գիտական հանդեսներում ավելի մեծաքանակ հոդվածներ տպագրելու գործընթացներին:</p> <p>25) Առավել մեծ ուշադրություն դարձնել «Հանրային կառավարում» գիտական հանդեսում տպագրվող աշխատանքների արդիականությանը, հոդվածների գրախոսման և գիտականության ապահովման գործընթացներին:</p> <p>26) Մշակել հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն:</p>
<p>Ընթացիկ վիճակի նկարագիր</p>	<p>✓ Ակադեմիայի ռազմավարական ծրագրի առաքելության մեջ և 8-րդ նպատակում արտահայտված են Ակադեմիայի հետաքրքրությունները և հավակնությունները հետազոտական ոլորտում:</p> <p>✓ Ռազմավարական ծրագրում նշված հետազոտական ուղղություններին համահունչ՝ Ակադեմիայում ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվում են հետևյալ ծրագրերը.</p> <p>1)«Մագիստրանտների ուսուցման արդյունավետությունն ապահովող հոգեբանական գործոնների ուսումնասիրում»,</p>

<p>2) «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիա</p> <p>3) «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»,</p> <p>4) Գիտության կառավարման հետազոտական կենտրոն:</p> <p>Ներկայումս ուսանողների ներգրավվածության աստիճանը նշված ծրագրերում ցածր է:</p> <p>Ակադեմիայի գիտական խորհրդի 2015 թվականի փետրվարի 27-ի նիստի որոշմամբ (արձանագրություն N 124)) հաստատվել են.</p> <p>1) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսի հրատարակության կանոնակարգ</p> <p>2) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես ներկայացվող բնագրերի ձևավորման և ներկայացման կանոնները</p> <p>3) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես ներկայացվող բնագրերի նախնական ստուգման և գրախոսման կարգը</p>

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐ-ՄԱՆ ԺԱՄ-ԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՂՔՅՈՒՆՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
<p>17. Նպատակաուղղել Ակադեմիայի հետազոտական, խորհրդատվական և ուսումնական գործընթացները դեպի ՀՀ-ում հանրային կառավարման հրատապ կարիքները:</p> <p>Արձագանքել ՀՀ-ում կառավարման կարիքներին, առավելագույնս աջակցել հանրային ծառայության արդիականացման խնդիրներին, խթանել նորարարական գործընթացները հանրային կառավարման բնագավառում:</p>	<p>Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Թողարկող ամբիոններ</p> <p>ՈՒԳԸ կամ</p>	<p>սկսած 2017/2018 ուսումնական տարվանից</p>	<p>Ակադեմիայի ամբիոնների կողմից ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնելու հնարավոր խոչընդոտների վերհանում և դրանց վերացմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում:</p> <p>Ակադեմիան մասնակցում է Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման ոլորտի առավել կարևոր խնդիրների վերլուծությունների իրականացմանը և դրանց լուծման ճանապարհները բացահայտելուն՝ համաձայն Ակադեմիայի առաքելության:</p>	<p>Գիտահետազոտական աշխատանքների իրականացման միջնաժամկետ ծրագիր:</p> <p>Իրականացվող հետազոտական ծրագրերի թվաքանակ՝ ըստ ամբիոնների:</p> <p>Նշված ծրագրերում</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

	ՈՒԳԽ			ընդգրկված աշխատողների, մագիստրանտների և ասպիրանտների թվաքանակ:	
18. Ներդնել Ակադեմիայի գիտահրատարակչական գործունեության, հրապարակվող աշխատանքների բարձր որակ ապահովող արդյունավետ մեխանիզմներ: Իսթանբուլ Ակադեմիայի սովորողների և աշխատողների աշխատությունների հրապարակման ակտիվությունը գիտական ամսագրերում:	Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գրահրատարակչական բաժին	Մշտապես իրականացվող գործընթաց	Վերափոխված է գիտահրատարակչական գործունեությունը՝ միջազգային չափանիշներին գիտական հրատարակությունների համապատասխանության ապահովմամբ: Գիտահրատարակչական գործունեության արդիականացում:	«Հանրային կառավարում» գիտական հանդեսի վարկանիշի բարձրացում: Գիտական ամսագրերում Ակադեմիայի սովորողների և աշխատողների հրապարակումների քանակական աճ: Ակադեմիայի մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների և անձնակազմի մասնակցությունը հանրապետական, տարածաշրջանային, ԱՊՀ այլ մրցույթներին և ծրագրերին:	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

<p>19. Մշակել մեխանիզմներ մագիստրանտների, ասպիրանտների, երիտասարդ գիտնականների գիտահետազոտական ծրագրերում ներգրավման, նրանց սոցիալ-տնտեսական խրախուսման և գիտաշխատողի մասնագիտական առաջընթացի գրավչության բարձրացման համար:</p>	<p>Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>ՈՒԳԸ կամ ՈՒԳԽ</p>	<p>սկսած 2017/2018 ուսումնական տարվանից</p>	<p>Նախաձեռնվել է սովորողների և երիտասարդ գիտնականների գիտաժողովների անցկացում: Ցուցաբերվել է աջակցություն դասախոսների գիտական ստաժավորմանը արտասահմանյան առաջատար գիտահետազոտական կազմակերպություններում և նրանց փորձի ակտիվ ներդրմանը Ակադեմիայում:</p> <p>Ապահովված է գիտության և հետազոտության կապը ուսումնառության հետ՝ ներգրավելով առավել ակտիվ սովորողներին և երիտասարդ գիտնականներին գիտական և դրամաշնորհային ծրագրերում:</p>	<p>Սովորողների և երիտասարդ գիտնականների գիտաժողովներ:</p> <p>Սովորողների և երիտասարդ գիտնականների թվաքանակը գիտական և դրամաշնորհային ծրագրերում:</p> <p>Ակադեմիայի հետազոտական նախագծերին մասնակցությունը՝ սկսած 2017 թվականից, առնվազն՝ - գիտամանկավարժական կազմի 30 % - առկա ուսուցման ասպիրանտների 30 %-մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների 15 %:</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
<p>20. Կատարելագործել և արդիականացնել Ակադեմիայի ասպիրանտական ծրագրերը՝ նպատակաուղղելով դրանք</p>	<p>Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր</p>	<p>սկսած 2016/2017 ուսումնական</p>	<p>Մշակվել և ներդրվել են հետբուհական կրթության նոր ծրագրեր՝ կրթական և հետազոտական կառուցամասերում արտահայտելով ծանրաբեռնվածությունը</p>	<p>Նորագույն հետազոտական և կրթական տեխնոլոգիաներ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով</p>

<p>նորագույն հետազոտական և կրթական տեխնոլոգիաներին տիրապետող և արդի աշխատանքի շուկային համապատասխան անհրաժեշտ մասնագիտական կարողություններով ու հմտություններով օժտված շրջանավարտների թողարկմանը:</p>	<p>Ասպիրանտուրայի բաժին Ամբիոններ</p>	<p>տարվանից</p>	<p>ECTS կրեդիտային համակարգով: Վերակառուցվել է Ակադեմիայի ասպիրանտուրան՝ նպատակաուղղելով ասպիրանտական կրթությունը դեպի արդյունավետ հետազոտական և մասնագիտական աշխատանք կատարելու ունակ շրջանավարտների պատրաստումը, նրանց համար ապահովվել է ապագա աշխատանքի ընդլայնված հնարավորություններ հնչպես ակադեմիական միջավայրում, այնպես էլ դրանից դուրս (հանրային կառավարման համակարգ և այլն): Ծրագրի կրթական կառուցամասում նախատեսվել են ապագա հետազոտողներին անհրաժեշտ փոխանցելի մասնագիտական, (ընդհանուր) և մանկավարժական գիտելիքների, կարողությունների, հմտությունների և ծիրքերի ուսուցմանը (զարգացմանը) միտված դասընթացներ և ծրագրեր:</p>	<p>ին տիրապետող և արդի աշխատանքի շուկային համապատասխան անհրաժեշտ մասնագիտական կարողություններով ու հմտություններով օժտված շրջանավարտներ: Հետազոտական նախագծերի հիման վրա կատարված ատենախոսությունների որակի բարձրացում:</p>	<p>չարգելված այլ միջոցներ</p>
---	--	-----------------	--	--	-------------------------------

<p>ՉԱՓԱՆԻՇ 7</p>	<p>ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ</p>
<p><i>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդարկություն</i></p>	<p>27) Մշակել ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականություն, սահմանել այդ քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշներ և մեխանիզմներ:</p> <p>28) Նպատակային աշխատանքներ տանել գրադարանային ֆոնդը հարստացնելու, այլ գրադարանների հետ համագործակցելու, գրադարանի աշխատակիցների աշխատանքային ունակությունները զարգացնելու, կրթական գործընթացին անմիջականորեն առնչվող գրականությունը թվայնացնելու և այն ուսանողների ու դասախոսների կարիքներին ավելի համապատասխանեցնելու ուղղությամբ:</p> <p>29) Մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:</p> <p>30) Պարբերաբար մոնիթորինգ իրականացնել ձեռք բերված միջոցների և սարքավորումների գործարկման նկատմամբ՝ Ակադեմիայի առաքելությանը և նպատակներին համապատասխանության տեսանկյունից՝ մշակելով</p>

	<p>մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար Ակադեմիայի ռեսուրսային բազայի արդիականացման արդյունավետության ցուցանիշներ:</p> <p>31) Ստեղծել բուժկետ, ինչպես նաև ապահովել շինություններն ու լսարանները համապատասխան նյութատեխնիկական պայմաններով՝ հնարավոր դարձնելով հատուկ կարիքներ ունեցող սովորողների ուսուցումը՝ ապահովելով ներառական կրթության իրականացումը:</p> <p>32) Ձևավորել լինգվաֆոնային կաբինետ՝ ուսանողների և աշխատակիցների օտար լեզուների ուսուցման մակարդակի բարձրացման նպատակով, մշակել օտար լեզուների ուսուցման դասընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:</p>
<p>Ընթացիկ վիճակի նկարագիր</p>	<p>✓ Ակադեմիայի 2013-2018թթ. ռազմավարական ծրագրում ներկայացվում են ֆինանսական կայունության և ռեսուրսների արդյունավետ կառավարման ապահովման հիմնախնդիրները:</p> <p>✓ Շենքային պայմանները բարելավելու նպատակով ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին» N 915-Ա որոշման համաձայն՝ Երևան քաղաքի Օրբելի 23 հասցեում գտնվող 4 235 150 հազ. դրամ շուկայական արժեքով 4318.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքը, շինությունները և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 760 500 հազ. դրամ կադաստրային արժեքով 3 հեկտար հողամասը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացվել է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:</p> <p>Նոր մասնաշենքերի գործարկմամբ կբարելավվեն Ակադեմիայի շենքային և նյութատեխնիկական պայմանները, ենթակառուցվածքները:</p>

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼԱՐՅՈՒՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
21. Բարեփոխել և ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը Ակադեմիայի ռազմավարական նպատակներին և խնդիրներին:	Ռեկտոր Տնտեսական աշխատանքների գծով	2017 թվականի հունվար	Իրականացվել է նյութատեխնիկական միջոցների, ֆինանսական ռեսուրսների պլանավորում: Միջոցների բաշխումը	Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնու-	ՀՀ պետական բյուջե, օրենքով

	<p>պրոռեկտոր Ֆինանսա- տնտեսական և հաշվապահա- կան հաշվառման վարչություն</p>		<p>ստորաբաժանումների և ծրագրերի միջև իրականացվել է ռազմավարական ծրագրում ամրագրված նախապատվություններին համաձայն:</p> <p>Պլանավորվել են ակնկալվող ֆինանսական ռեսուրսները, դրանց համաչափ բաշխումն ըստ ռազմավարական խնդիրների իրականացման, աշխատավարձի ֆոնդը և վերջինիս աճի հնարավորությունը:</p> <p>Բյուջետային պլանավորման և իրականացման հաշվեկշռված համակարգ:</p>	<p>թյան և արդյունավետու- թյան քաղաքականու- թյուն: Կողմնորոշիչ համամասնու- թյունների սահմանում Ակադեմիայի զարգացմանը, աշխատանքի վարձատրու- թյանն ու ենթակառուցված քի պահպան- մանն ուղղվող միջոցների ծավալների միջև՝ ըստ տարիների: 2018 թվականին՝ արտաբյուջե տային մուտքերի աճի տոկոսը 2013թ. նկատմամբ՝ առնվազն 20% Ակադեմիայի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճ՝ առնվազն 20%:</p>	<p>չարգելված այլ միջոցներ</p>
--	--	--	--	---	---------------------------------------

				Տարեկան բյուջեի պլանավորում և հաշվետվություն:	
22.Ստեղծել լեզվի ուսուցման մասնագիտացված լսարաններ՝ օտար լեզուների ուսուցման որակը արդի պահանջներին համապատասխանեցնելու և օտար լեզուներով դասախոսություններ կազմակերպելու նպատակով:	Տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն	2017 թվականի դեկտեմբեր	Օտար լեզուների ուսուցման լսարանի ստեղծում՝ օգտագործելով ուսուցման ժամանակակից սարքավորումներ և տեխնոլոգիաներ:	Օտար լեզվով հաղորդակցվող աշխատողների և սովորողների թվաքանակ:	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
23. Իրականացնել Ակադեմիայի տեղեկատվական ռեսուրսների ուսումնասիրություն և նախանշել զարգացման առաջնահերթ ուղղությունները:	Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին	2017 թվականի հունվար	Տեղեկատվական ռեսուրսների վիճակի ուսումնասիրում, հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունների որոշում: Տեղեկատվական ռեսուրսների զարգացման ուղղությունների վերաբերյալ ծրագրի առկայություն: Տեղեկատվական ռեսուրսների զարգացման գործընթացի ապահովում և շարունակական բարելավում:	Տեղեկատվական ռեսուրսների զարգացման ուղղությունների վերաբերյալ ծրագիր: Համակարգչային տեխնիկայի սպասարկման գործընթացի կանոնակարգում՝ գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում:	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

<p>24. Ստեղծել Ակադեմիայի գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահ:</p> <p>Բարելավել Ակադեմիայի գրադարանի գործունեությունը՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ:</p> <p>Ապահովել սովորողների և անձնակազմի մուտքը էլեկտրոնային գրադարան համացանցի միջոցով, օգտվելով իր ծածկագրից:</p> <p>Բաժանորդագրվել էլեկտրոնային գիտական հանդեսներին՝ ուսումնասիրելով և առանձնացնելով դրանք ըստ մասնագիտությունների:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին</p> <p>Գիտատեխնիկական գրադարան</p>	<p>2017/2018 ուսումնական տարվանից</p>	<p>Ստեղծվել է գրադարանի էլեկտրոնային սրահ և ապահովված է դրա մատչելիությունն ուսանողներին և անձնակազմին: Բարձրացել է տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը և դրանց օգտագործման արդյունավետությունը, ընդլայնվել է Ակադեմիայի գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահը: Գրադարանային գործընթացների ավտոմատացման խնդիրների համալիր լուծում:</p> <p>Գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահի կահավորում համակարգիչներով:</p>	<p>Գործող էլեկտրոնային գրադարան:</p> <p>Ընթերցողներին տրվող տեղեկատվական ռեսուրսների որակի ապահովում:</p> <p>Ընդլայնված գրադարանային ֆոնդ, էլեկտրոնային ընթերցասրահների առկայություն:</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>25. Ընդլայնել Ակադեմիայի մասնակցությունը գրադարանային ցանցերում և կոնսորցիումներում, ապահովել արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը Ակադեմիայի սովորողների և աշխատողների համար:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին</p>	<p>2017/2018 ուսումնական տարվանից</p>	<p>Ընդլայնվել է Ակադեմիայի մասնակցությունը տարբեր հաստատությունների էլեկտրոնային ռեսուրսների շտեմարաններին, գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, ապահովված է արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը Ակադեմիայի ուսանողների և անձնակազմի համար:</p>	<p>Ակադեմիայի մասնակցությունը տարբեր հաստատությունների էլեկտրոնային ռեսուրսների շտեմարաններին և կոնսորցիումներին:</p> <p>Հարցումների հիման վրա կարիքների վերլուծություն:</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

	Գիտատեխնիկական գրադարան			Գիտահետազոտական տեղեկատվական աղբյուրներից օգտվելու մատչելիություն և անհրաժեշտ պայմաններ:	
<p>26.Ստեղծել համապատասխան ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված տեղեկատվական կենտրոն-հեռավար տեսագիտաժողովների կենտրոն, որտեղ կկազմակերպվեն տեսագիտաժողովներ, հեռավար աշխատանքային քննարկումներ, որը կապահովի թե՛ տեղեկատվության ստացման, համակարգման և վերլուծման, թե՛ պետական կառավարման մարմիններին և քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ժամանակակից պահանջները:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին</p> <p>Գիտատեխնիկական գրադարան</p>	<p>2017/2018 թթ. ուսումնական տարվանից</p>	<p>Ստեղծվել է համապատասխան ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցված տեղեկատվական կենտրոն-գրադարան: Ապահովված է արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը:</p>	<p>Ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած տեղեկատվական կենտրոն-հեռավար տեսագիտաժողովների կենտրոն:</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>27.Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Ակադեմիայի ուսումնական գործընթացներում:</p> <p>Հասնել դասընթացների առնվազն 20% ապահովվածությանը էլեկտրոնային ուսուցման</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p>	<p>2017/2018 թթ. ուսումնական տարվանից</p>	<p>Դասավանդման որոշակի քանակի ապահովվածություն էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով:</p> <p>Ստեղծվել են նպաստավոր պայմաններ և ներդրվել են խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում տեղեկատվական</p>	<p>Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում հիմնական դասախոսների առնվազն կեսի կողմից:</p> <p>Դասընթացների</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

<p>ուսումնամեթոդական նյութերով (դասախոսությունների տեքստեր և այլն):</p>	<p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին</p> <p>Ռեֆերենտ</p> <p>Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն</p>		<p>տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման համար:</p> <p>Ձևավորվել են անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսներ՝ էլեկտրոնային (առցանց) եղանակով ուսուցման դասընթացների մշակման և ներդրման համար:</p>	<p>առնվազն 20% ապահովվածություն էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով (դասախոսությունների տեքստեր և այլն):</p> <p>Հոսքային տեխնոլոգիական լսարանների ստեղծում՝ ապահովված ինտերակտիվ կապով, համակարգչով, ցուցադրման թվային սարքերով, էլեկտրոնային ինտերնետային գրատախտակներով:</p>	
<p>28. Ակադեմիայում կենսագործունեության անվտանգության պահանջների իրականացումը:</p>	<p>Տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման</p>	<p>2017/2018 ուսումնական տարվանից</p>	<p>Անվտանգության արդյունավետ գործող համակարգ:</p> <p>Ուսանողների և աշխատակիցների համար անվտանգ միջավայր, առողջապահական խնդիրների և հատուկ կարիքներ ունեցող ուսանողների, աշխատողների, դիմորդների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ:</p>	<p>Անվտանգության արդյունավետ համակարգ:</p> <p>Աշխատողների և սովորողների շրջանում առաջին բուժօգնություն ցուցաբերելու վերապատրաստ</p>	<p>Ակադեմիայի արտաբյուջետային միջոցներ</p>

	բաժին			ման դասընթաց: Առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար դեղորայք և այլ պարագաներ:	
--	-------	--	--	--	--

ՉԱՓԱՆԻՇ 8	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
<p><i>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդարկություն</i></p>	<p>33) Դիվերսիֆիկացնել ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ պլանավորելով և գործարկելով հետադարձ կապի ամրապնդման, ինչպես նաև շահակիցների կարիքների գնահատման արդյունավետ նոր ու կայուն մեխանիզմներ:</p> <p>34) Ստեղծել շրջանավարտների մեկ միասնական տեղեկատվական բազա:</p> <p>35) Ավելի ակտիվ դերակատարում ունենալ թիրախային տարբեր խմբերի կրթական կարիքների վերհանման գործում:</p>
<p><i>Ընթացիկ վիճակի նկարագիր</i></p>	<p>Ակադեմիան, համագործակցելով հեռուստաընկերությունների, ռադիոհաղորդաշարերի, տպագիր և էլեկտրոնային մամուլի կառույցների և լրատվական գործակալությունների հետ, աստիճանաբար ընդլայնում և բազմազանեցնում է գործընկերային կապերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հասարակության լայն շրջանակների, հանրային կառույցների հետ: Ակադեմիայում գործում է հետադարձ կապի մեխանիզմներ (հարցումներ գործատուների շրջանում, հանդիպումներ ուսանողների և շրջանավարտների հետ, էլեկտրոնային կապ)՝ շահառուների կարծիքները հետագա գործունեության կազմակերպման գործընթացում ներառելու նպատակով:</p> <p>Ակադեմիան հասարակությանը մատուցում է նաև լրացուցիչ, շարունակական կրթական ծառայություններ՝ այդ ուղղությունը դիտելով որպես իր մրցունակությունն էապես բարձրացնող, ինչպես նաև ֆինանսական մուտքերի բազմազանեցումն ապահովող կարևոր գործիք: Այս առումով Ակադեմիան իրականացնում է քաղաքացիական ծառայողների, համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ:</p>

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
<p>29. Ամրապնդել կապը Ակադեմիայի շրջանավարտների հետ, ստեղծել շրջանավարտների տվյալների տեղեկատվական և հաղորդակցության համակարգ: Ընդլայնել շրջանավարտների՝ Ակադեմիայի և միմյանց հետ առցանց և անմիջական շփման հնարավորությունները:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն</p> <p>Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին</p>	<p>Մշտապես իրականացվող գործընթաց</p>	<p>Ուսումնասիրվել է Ակադեմիայի շրջանավարտների զբաղվածության մակարդակի վերլուծություն: Ակադեմիայի շրջանավարտների միության ստեղծում: Շրջանավարտների տվյալների տեղեկատվական և հաղորդակցության համակարգ: Շրջանավարտների՝ աշխատանքի որոնման աջակցմանն ուղղված կառույց: Ակադեմիայի շրջանավարտների զբաղվածության վերլուծություն, բացահայտված են բացերը, արված են անհրաժեշտ փոփոխությունների մասին առաջարկներ:</p>	<p>Շրջանավարտների զբաղվածության մակարդակի վերլուծություն ըստ տարիների: Ակադեմիայի շրջանավարտների միություն: Շրջանավարտների տվյալների տեղեկատվական և հաղորդակցության համակարգ: Շրջանավարտների միությանն անդամագրվածների թվաքանակ:</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
<p>30. Բարելավել Ակադեմիայի համացանցային կայքը: Կատարելագործել Ակադեմիայի համացանցային կայքը, բարելավել նրա լրատվական ապահովումը, տեխնիկական վիճակը և</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Տեղեկատվության և</p>	<p>Մշտապես իրականացվող գործընթաց</p>	<p>Տեղեկատվական ռեսուրսների մատչելիություն: Արժեքավոր տեղեկատվությամբ և արդիական բովանդակությամբ Ակադեմիայի համացանցային կայք: Կրթական գործընթացի վերաբերյալ</p>	<p>Ակադեմիայի բարելավված համացանցային կայք: Ակադեմիայի կայքի</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>շահագործման արդյունավետությունը: Կատարելագործել համացանցային կայքը, որի առկայությունը թույլ կտա ավելի իրազեկված լինել ուսումնական համակարգի հետ կապված վերջին նորություններին, կիրառել այդ բնագավառում նաև միջազգային հանրության դրական փորձը:</p>	<p>հասարակայնության հետ կապերի բաժին</p> <p>Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին</p>		<p>ուսումնառողներին անհրաժեշտ և կայքում տեղադրված համարժեք տեղեկատվություն: Ակադեմիայի կրթական բարեփոխումների և կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական նյութերը տեղադրվել են Ակադեմիայի կայքում:</p>	<p>այցելուների թվի աճ: Կայքում տեղադրված տարբեր լեզուներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն) թարգմանված նյութեր, բուկլետներ, տեղեկատվական նյութեր:</p>	
<p>31.Ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր Ակադեմիայի շրջանավարտների համար հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին</p> <p>Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին</p> <p>Պրակտիկայի բաժին</p>	<p>2015/2016 ուսումնական տարվանից սկսած</p>	<p>Ակադեմիայի տարածքում պարբերաբար (տարին 1 անգամ) կազմակերպվում են հանդիպումներ Ակադեմիայի շրջանավարտների համար հիմնական գործատու կազմակերպությունների ու հանրային կառույցների ներկայացուցիչների և Ակադեմիայի դասախոսների, ուսանողների ու շրջանավարտների միջև՝ աշխատաշուկայի արդի պահանջները և կարիքները վերջիններիս ներկայացնելու համար:</p>	<p>Համագործակից կառույցների վերաբերյալ տարեկան պարբերական նոյամբ թարմացվող տվյալների բազա՝ սկսած 2015/2016 ուսումնական տարվանից: Ակադեմիապետական կառավարման մարմին փոխկապակցության գործող համակարգ:</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>32. Զարգացնել և բազմազանեցնել հասարակության հետ Ակադեմիայի կապերը, ապահովել Ակադեմիայի ակտիվ համագործակցությունը ՋԼՄ-ների հետ:</p> <p>Ընդլայնել Ակադեմիայի օպերատիվ լրատվությունը և սեփական գովազդային նյութերի հրատարակումը:</p> <p>Ակադեմիայի գործունեության, ծրագրերի հանրային լայն լուսաբանվածության և շահառուների հետ շարունակական հաղորդակցության ապահովում և միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին «Հանրային ծառայություն» շաբաթաթերթ</p>	<p>2015/2016 ուսումնական տարվանից սկսած</p>	<p>Ակադեմիայի լուսաբանմանն առնչվող անդրադարձների քանակը ՋԼՄ-ներում:</p> <p>Կազմակերպվել են Ակադեմիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություններ:</p> <p>Բովանդակային տեղեկատվական նյութերի մշակում, տպագրում, տարածում և լուսաբանում</p> <p>Գովազդային միջոցներ (մեթոդական նյութեր, գրքույկներ, տեղեկատվական այլ նյութեր (բուկլետներ, տեղեկանք-թերթիկներ, պաստառներ, օրացույցներ, էլ. կայքով տեղեկատվության տրամադրում և այլն):</p> <p>Հանրային իրազեկվածության և հանրային համագործակցության արդյունավետության բարձրացում և բարենպաստ հանրային տեղեկատվական միջավայրի ապահովում՝ շահառուների ներգրավմամբ, մասնավորապես, ՋԼՄ ներկայացուցիչների՝ լրագրողական-ճանաչողական այցերի պլանավորում, կազմակերպում և իրականացում:</p> <p>Ակադեմիայի շահառուների հետ շարունակական հաղորդակցության ապահովում:</p>	<p>Մամուլում Ակադեմիայի գործունեության վերաբերյալ տեղեկատվության առկայություն, տպագրված հոդվածների, տեսանյութերի առկայություն:</p> <p>Հրապարակված քարոզչական նյութերի տեսակներն ու թիվը:</p> <p>Հրապարակված նյութերից օգտվելու պոտենցիալ հնարավորությունեցող քաղաքացիների թիվը:</p> <p>Ակադեմիայի PR ակտիվության (լրատվական-գովազդային միջոցառումներ) աճ:</p> <p>Ակադեմիայի վերաբերյալ ՋԼՄ անդրադարձերի (PR արդյունավետության) թվի աճ:</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
--	--	---	--	--	--

ՉԱՓԱՆԻՇ 9	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ
<p>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն</p>	<p>36) Զարգացնել Ակադեմիայի և պետական կառավարման մարմինների ու կազմակերպությունների միջև բազմակողմանի փոխհամագործակցության ձևերն ու մշակել նոր մոտեցումներ՝ ընդլայնելով արտաքին շահակիցների շրջանակը:</p> <p>37) Նպատակային դարձնել միջազգային փորձի փոխանակման գործընթացները՝ դրանք ծառայեցնելով Ակադեմիայի հիմնական խնդիրները լուծելուն և ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղական հաստատությունների հետ համագործակցությանը:</p> <p>38) Վերանայել Ակադեմիայի հավակնությունները միջազգայնացման ոլորտում՝ ելնելով առաքելությունից և ռազմավարական խնդիրներից:</p> <p>39) Մշակել հստակ մեխանիզմներ կնքված միջհամալսարանական պայմանագրերի և Ակադեմիայի կրթական գործընթացների միջև կապն ավելի ամրապնդելու նպատակով, դրանով իսկ նպաստելով հաստատության զարգացմանը փորձի փոխանակմանը և ուսումնական գործընթացի միջազգայնացմանը:</p> <p>40) Ներդնել այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքների գնահատման և արտաքին կապերի հաստատմանն ուղղված միջոցառումների նպատակայնության մեխանիզմներ:</p> <p>41) Մշակել բենչմարկինգի իրականացման կանոնակարգված ձևաչափ:</p>
<p>Ընթացիկ վիճակի նկարագիր</p>	<p>Ակադեմիան շարունակաբար ընդլայնում է համագործակցության շրջանակները:</p> <p>Հարկ է ընդգծել նաև, որ կնքված համագործակցության պայմանագրերի մեծ մասը գործում են և դրանց շրջանակներում իրականացվում են բազմաթիվ ծրագրեր:</p> <p>Ակադեմիան (<< կառավարման դպրոցը) NISPAcee-ի ինստիտուցիոնալ անդամ է 1995 թվականից և մշտապես մասնակցում է նրա կողմից կազմակերպվող գիտաժողովներին¹ (տե՛ս http://www.nispa.sk/user_inst_detail.php?inst_id=3):</p> <p>Որպես նշված կազմակերպության անդամ՝ Ակադեմիան անվճար հիմունքներով ստանում է NISPAcee-ի կողմից հրատարակված գրքերն ու ամսագրերը՝ համալրելով գրադարանային ռեսուրսները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների փորձագետների ուսումնասիրություններով:</p> <p>Ակադեմիան նաև «Տարածքային կառավարման և տեղական ինանքակառավարման մարմինների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների եվրոպական միության» (ENTO) անդամ է 2013 թվականի հունիսից: Այն հնարավորություն կտա Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմին տեղեկացված լինելու և մասնակցելու ENTO-ի շրջանակներում կազմակերպվող ծրագրերին և վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև ստանալու վերջինիս հրատարակություններն անվճար հիմունքներով:</p>

¹ NISPAcee (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման ինստիտուտների և դպրոցների միություն) 20-րդ՝ «Հանրային կառավարման արևելքն ու արևմուտքը. զարգացման քսան տարիներ» խորագրով միջազգային գիտաժողով, Օհրիդ, Մակեդոնիա, 2012թ: Ներկայացվել է «Փոքր և միջին ձեռնարկությունների ուսուցմանն աջակցության հանրային քաղաքականությունը Հայաստանում» հոդվածը:

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՐՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
33. Ընդլայնել Ակադեմիա-հանրային ծառայություն համագործակցությունը, նրանց գործունեության ուղղությունները, հնարավորությունները և հստակեցնել համագործակցության ձևաչափերը:	Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Վերապատրաստման, որակավորման բարձրացման և գիտահետազոտական գործունեության բաժին Ուսումնամեթոդական վարչություն Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին	2017 թվականի հունվար	Ընդլայնվել է համագործակցությունը հանրային ծառայության բնագավառում, խթանվել է հարաբերությունների հետագա զարգացումը և ամրապնդվել է շարունակական համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում: Ուսումնասիրվել է լրացուցիչ կրթության պահանջարկը՝ ըստ թիրախային խմբերի, և առաջարկը՝ ըստ Ակադեմիայի մասնագիտությունների ու դասընթացների, հաստատվել է փոխկապակցություն առաջարկի և պահանջարկի միջև՝ ստեղծելով գործընկերային կապեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների հետ:	Նախանշվել են համագործակցության ուղղությունները: Առաջարկություններ, վերլուծություններ, հաշվետվություններ: Կնքված պայմանագրերի քանակ: Ունկնդիրների թվաքանակ՝ տարեկան կտրվածքով:	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ
34. Կատարել արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի ներքին և արտաքին բենչմարքինգ	Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ուսումնական աշխատանքների գծով	2016 թվականի դեկտեմբեր	Միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի համապատասխանեցում: Միջազգային փորձի համապարփակ վերլուծություն, առաջարկությունների ներկայացում:	Համագործակցության ընդլայնման և խորացման մասին ուսումնասիրության հաշվետվություն: Կազմակերպությունների ցանկ, որոնց	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

<p>(առաջավոր փորձի համեմատական վերլուծություն): Ուսումնասիրել միջազգային փորձն ըստ կրթական տարածքների, կատարել տեղայնացված վերլուծություն և գնահատում ըստ Ակադեմիայի մասնագիտությունների:</p>	<p>պրոռեկտոր</p> <p>Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին</p>		<p>Համագործակցության ընդլայնման և խորացման համար առկա նախադրյալների և խոչընդոտների ուսումնասիրում:</p>	<p>օրինակով Ակադեմիան կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն): Միջազգային փորձի համապարփակ վերլուծություն, գրավոր առաջարկություններ: Տարեկան հաշվետվություններ և ընթացիկ զեկույցներ:</p>	
<p>35.Ընդլայնել Ակադեմիայի միջազգային գործունեության ոլորտը, նպաստել Ակադեմիայի ամբիոնների ներգրավմանը միջազգային համագործակցության ծրագրերում:</p> <p>Զարգացնել համագործակցությունը արտասահմանյան, այդ թվում նաև ԱՊՀ երկրների առաջատար բուհերի հետ:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Ամբիոններ</p>	<p>2016 թվականի դեկտեմբեր</p>	<p>Զարգացել է համագործակցությունը արտասահմանյան, այդ թվում նաև ԱՊՀ երկրների առաջատար բուհերի հետ՝ միջմասնագիտական ասպարեզներում համատեղ մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ: Համագործակցող առաջատար բուհերը, համատեղ գործունեության ոլորտները և արդյունքները:</p> <p>Համապատասխան գործողությունների կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագիր, որը նպաստում է Ակադեմիայի և նրա ստորաբաժանումների լիարժեք ներգրավմանը Բոլոնիայի գործընթացի բարեփոխումներում:</p>	<p>Համագործակցող գործընկեր-հաստատությունների թիվը և համագործակցության արդյունքները: Միջազգային համագործակցության ծրագրերի քանակը և արդյունքները: Արտաքին ֆինանսավորմամբ համատեղ ծրագրերի թիվը: Համագործակց կառույցների վերաբերյալ տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

				բազա՝ սկսած 2015/2016 ուսումնական տարվանից:	
<p>36. Նպաստել Ակադեմիայի ուսումնագիտական միավորների, հետազոտական խմբերի և անհատ փորձագետների ակտիվ ներգրավմանը միջազգային գիտակրթական նախագծերում ու դրամաշնորհային ծրագրերում, նրանց փորձագիտական գործունեության ծավալմանը բարձրագույն կրթության միջազգային կառույցներում:</p>	<p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p>	<p>2017 թվականի հոկտեմբեր</p>	<p>Ընդլայնվել և ամրապնդվել է գիտակրթական կառույցների հետ համագործակցությունը միջբուհական մակարդակում և կոնսորցիումների շրջանակներում:</p> <p>Ակտիվացել է Ակադեմիայի մասնակցությունը միջազգային դրամաշնորհային ծրագրերին: Ծրագրերի նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվական ծառայություն:</p> <p>Ակադեմիայի անդամակցությունը/մասնակցությունը միջազգային կազմակերպություն-ներին և կոնսորցիումներին:</p>	<p>Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը: Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Ակադեմիայի համագործակցության արդյունավետության վերլուծություն: Դրամաշնորհային ծրագրերը:</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>
<p>37. Աջակցել դասախոսների ստաժավորմանը արտասահմանյան առաջատար գիտահետազոտական կազմակերպություններում և նրանց փորձի ակտիվ ներդրմանը Ակադեմիայում:</p>	<p>Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր</p> <p>Արտաքին կապերի գծով պրոռեկտոր</p>	<p>2017թ.</p>	<p>Դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմներ: Ստաժավորում անցած դասախոսների թվաքանակը և ծրագրից նրանց բավարարվածության մակարդակը:</p>	<p>Միջազգային ծրագրերում ընդգրկված դասախոսների թվաքանակը: Տարբեր դասավանդման չափանիշների կիրառում, միջազգային փորձի ընդլայնում:</p>	<p>Միջազգային դոնոր կազմակերպություններ</p>

ՉԱՓԱՆԻՇ 10	ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
<p>Բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն</p>	<p>42) Լրամշակել որակի ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգերը, դրանց գնահատման մեխանիզմները, կրթության որակի բարձրացման հստակ չափելի ցուցիչներ և արդյունավետության չափման մեխանիզմներ:</p> <p>43) Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ և ապահովել դրանց արդյունավետ կիրարկումը, լրամշակել հարցախույզների հարցաշարերի բովանդակությունը, բարելավել հարցախույզ իրականացնելու ձևաչափը, մեթոդները:</p> <p>44) Մշակել որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված մարդկային ռեսուրսների շահադրդման մեխանիզմներ:</p> <p>45) Ապահովել որակի ապահովման կառույցներում ընդգրկված անձնակազմի պարբերաբար վերապատրաստման դասընթացներ իրականացումը:</p> <p>46) Ավելի համամասնական դարձնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:</p> <p>47) Մշակել տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:</p> <p>48) Հստակեցնել Ակադեմիայում իրականացվող մոնիթորինգների և սոցիոլոգիական հարցումների սկզբունքները և նպատակները, մշակել հարցումների վերլուծության և կրթության որակի բարելավման քաղաքականություն:</p>
<p>Ընթացիկ վիճակի նկարագիր</p>	<p>Վերջին տարիներին որակի ապահովման գործիքները, ընթացակարգերը զգալի զարգացում են ունեցել: Ակադեմիան փորձում է որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ապահովել ռազմավարական, կրթական ծրագրերի քննարկմանը ներգրավելու, հանրային քննարկումներ, սեմինարներ կազմակերպելու և այլ եղանակներով:</p> <p>Ակադեմիայում կիրառվող ներքին որակի ապահովման գործիքները դեռ նորաստեղծ են կամ գտնվում են լրամշակման փուլում, ինչը դժվարացնում է դրանց որակի և արդյունավետության գնահատումը:</p> <p>Ակադեմիայի գիտական խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 28-ի նիստի որոշմամբ (արձանագրություն N 121) հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում կրթության որակի կառավարման շրջանակներում սոցիոլոգիական հարցման անցկացման կարգը:</p> <p>Կարգով սահմանվել են Ակադեմիայում կրթության որակի կառավարման համակարգի շրջանակներում սոցիոլոգիական հարցման կազմակերպման, անցկացման, ստացված արդյունքների մշակման, ամփոփման, հրապարակման, պահպանման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:</p>

ՆՊԱՏԱԿ-ԽՆԴԻՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ԿԱՏԱՐ-ՄԱՆ ԺԱՄ-ԿԵՏԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ
<i>Ի՞նչ պետք է արվի:</i>	<i>Ո՞վ է իրականացնում:</i>			<i>Որո՞նք են մեր ցուցանիշները:</i>	
38. Իրականացնել համեմատական վերլուծություն ՀՀ և արտասահմանյան բուհերի որակի ապահովման քաղաքականության լավագույն փորձը վերհանելու ուղղությամբ:	Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին	2016/2017 ուսումնական տարի	Կրթության որակի ապահովման քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառույթների կենտրոնացման միջազգային փորձի ուսումնասիրություն: Ակադեմիայում որակի մշակույթի առկայություն և շարունակական բարելավում, որը հիմնված է համագործակցության, թափանցիկության և վստահության վրա:	Կրթության որակի ապահովման քաղաքականության համակարգման, իրականացման և վերահսկողության գործառույթների կենտրոնացման միջազգային փորձի ուսումնասիրություն: Որակի գնահատման սահմանված ցուցիչներ: Ակադեմիայում որակի մշակույթի կայացում:	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ միջոցներ

10-րդ չափանիշի խորհրդատվությունների մասով անդրադարձ է կատարվել նախորդ բոլոր չափանիշներում: